

Թերթ 20. « Եւ է առաջին խորանն կամարը Կ. որ նշանակէ թէ տեղեակը էին սուրբ երրորդութեանն և ուսեալը ի սրբաանցութեանցն և են ի սմա ծառք արմաւենիք և հաւք սիրամարգ. զայլն ի իրատն կարդա որ իմանաս »:

Թերթ 21. « Եւ է խորանս չորրորդ զղորատն աղամա նշանակէ, որ ի վերայ չորից սեանց կայ, որ է կապոյտ և սեաւ, և սեղանն ի մէջ կամարացն բոցավառ, և խաչ նուազ գունակ երևի »:

Թերթ 22. « Եւ խորանս. և. նշանակէ զտապանն նոյի. կարմիրն յուրվ զի առ նոյի երևեցաւ արևուն Գրիստոսի որ միշտ պատարագի յեկեղեցիս քրիստոնէից և աստ շուշանն և նշենիք՝ որք ունին բազում խորհուրդս »:

Թերթ 23. « Եւ խորանս. Զ. նշանակէ զխորանն արրահամու և աստ է ծառն սաբեկիս որ կախեցաւ խոյն փոխանակ իսահակիս որ նշանակէ զտէրն Գրիստոս ի խաչին պատարագեալ »:

Թերթ 24. « Իսկ, Է. և Ը. խորանքս են մովսէսեան. և են սինքն խարխառտք և զոյնն կապոյտ և կարմիրն նուազ. և են ի խորանի աստ հաւք աղանիք կարմրակտուցք. որք նշանակեն զբաշար և զայլ պունին՝ կան »:

Թերթ 25. « Իսկ, Ը. խորանն որ է աստ կաքաւքն և աստ սեղան կա ի վերայ խորանին և աղանիք ոմանք յետս ի խորանն հային և ոմանք ուղիղ հային և. Ի. եղջիր որ աստ են մովսէս և ահարոն »:

Թերթ 26. « Եւ. Թ. խորանս որ է տաճարն սողմոնի սեան և կապոյտն նուազեալ և կարմիրն առաւելեալ. հաւք խորանիս աքաղաղքն են յաւրինակ մարգարէիցն և սեղանն որ ի վերայ խորանիս՝ մէջն թափուր, և ծառք նոնենիք կեղեւիւ ծածկեալ. են և աստ ծառք արմաւենիք, ստորուստ ի վեր տերևն »:

Թերթ 27. « Եւ. Ժ. խորանս նոր եկեղեցոյ է աւրինակ, պայծառացեալ կարմրաւք և են հաւք ձկնքաղք և ոմանք ի սոցանէ յաքաղս հային. են և մրտմունք կարմրակտուցք, և ոմանք պարզեալ առ միմեանս զվզերն, և ոմանք յետս են ոլորեալ և խաչ ի վերայ խորանիս ի թվին հայոց հազար յիսուն եւթ՝ ընդ նմին գործ է անկիւնն եւ մետրոպիւն մեղաց ներհուն. գրեցի զայս զիրս ճարտարաւաւուն: Երրորդութիւնն միարուն որ է նա յոյս ամենեցուն զգայիանէն և զծնողս նորուն առնէ արծառն աշոյ դասուն: Ամէն »:

Աւրիշ լի-իշեան նկարներն են.

Թերթ 29. Մատթէոս, նստեալ զրէ:
Թերթ 105. Մարկոս, և այլն, և այլն:
Թերթ 156. Ղուկաս, և այլն, և այլն:
Թերթ 240. Յովհաննէս կանգնեալ իւր անձաւին մէջ ճառէ առ Պրօքորոս, որ նստեալ զրէ:

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

(Շարայարիւի)

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմ. էջ 89)

Բ.

ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՅՈՑ

ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ

Զկայ Հայ բժշկական Ձեռագիր մը, որ իր մէջը չունենայ « ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ » վերնագրով մաս մը, և հետո՛ւ ալ՝ « Գրիգորի Նիսեայ Եպիսկոպոսի ուսացեալ » բառերը կամ խօսքը. և այդ բոլորը՝ անկասկած՝ առնուած են այն օրիւնակէն՝ զոր 716 թուականին է. Պոլսոյ մէջ թարգմանած է ՍՅԵՓԱՆՔԱՍ ՍԻՒՆԵՅԻ մեծանուն եպիսկոպոսը:

Բայց Նիսեացիի այս գործը միշտ համոռտ վիճակի մը մէջ է որ հիւրընկալած

1. Այս « պունին » բառն մեզ անծանօթ է | Անտաթախոյ ընթերցելի պոսթիկ կամ(այնք) ԻՐ. Խոյ.

2. 1057 + 551 = 1608 յամի Տեսան,

են Ռժշկարանները, և ընդհանրապէս՝ զայն քիչ մ'ալ աշխատակելով, ինչպէս ցոյց կու տար իմ քով եղած օրինակ մը, զոր ներկայացուցած եմ « ԷՆՏԻԿՍ ԱՄԲՈՐՆԻՑ » ի 1921 ի Յուլի-(-)գոստ. միացեալ թիւին մէջ:

Անշուշտ անհերքելի մեղադրանք մ'է՝ զոր մեր նախնիք այդու կը հրաւիրեն իրենց վրայ դժբախտարար. բայց այդ իսկ արդեօք չ'անպացուցաներ թէ անոնք ինչ մեծ պաշտում մը ունեցած են, և ինչ խոր յարգանք դէպի այդ գիտական գործը, զոր յոյն երևելի հեղինակ Դր. Նիւսացի շարադրած էր Չորրորդ Դարու մէջ, և զոր Ստեփանոս Սիւնեցի գեղեցկապէս թարգմանելով՝ ամենաթանկագին ու յաւէժակայ առաջնորդ մը ընծայ բերած էր Հայ բժշկութեան:

Դագիկ — Հիմումեան բժշկարանէն երեք դար առաջ թարգմանուած է այն. և այս ապացոյց է՝ թէ այն ատեններն իսկ Հայ Ազգիս մէջ պակաս չէին բժշկութեամբ հետաքրքրուողներ, որոնց մասին պիտի անդրադառնամ ուրիշ առթիւ:

*

Գրիգոր Նիւսացիի այս գործին բազմաթիւ օրինակները սեւսած եմ հս. բայց մինչև հիմայ և ո՛չ մէկ անգամ պատահած էի ամբողջական բանի մը. և առիթը բերաւ որ զայն տեսնէի Ս. Ղազարի վանքը:

Վեց օրինակ կայ անկէ, վեցն ալ կատարեալ ու գեղեցիկ ձեռագրերն են, իւրարմէ քիչ տարբեր, որոնց նկարագրութիւնը զուրկ չեմ համարիր կարևորութիւնէ:

*

ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿԸ՝ որ (1128, է. Բ.) թուահամարն ունի, կաշէպատ հաստ կողքերով փոքրադիր հատոր մ'է, 12 հր. մեղր մեծութեամբ, 9 հր. մեղր լայնութեամբ, և 5,5 հր. մեղր թանձրութեամբ: Ունի 313 թերթ, և նաև՝ սկիզբն ու վերջը երկերկու թերթ մագաղաթեայ պահպանակ, որոնց վրայ միջակ երկաթագիր գրերով կը կարդացուին Աւետի մասեր:

Թեւթը հաստ բամբակեայ է, ունի 626 էջ միասին գրութիւն՝ որ համակ ԲՈՒՈՐԱԳԻՐ է գեղեցիկ, դիւրաւ ընթեռնելի:

Առաջին էջին մէջտեղը գրուած է՝ Յտող կարմիր՝ « Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ Յաղագս բնութեան մարդոյն » վերտառութիւնը, շրջապատուած ծաղկազիծ խորանով մը, որուն վերեւ կ'երևի թևատարած հրեշտակ մը մինչև իւր կուրծքին կէսը:

Ձեռագրին 355-357 էջերուն վրայ կը կարդացուի թարգմանութեան Յիշատակաւորանը, որ է՝

« Ի Յ, երորդի՝ Մ, երորդի՝ Ի, երորդի, « Է, երորդի՝ արտածոց աշխարհիս՝ ըստ « յունարեն բոյոյ՝ ի յարեքսասանեքորդի՝ « ընդիքտիոնին, իսկ ըստ հույում բոյի, « ՄԻԱ, յասարին ումի բողատորոսեան « Լիսին, բարդունեցան գիրք սրբոյն գրի- « զորի Նիստա Եպ. ի ստոյց սարկունաց « ի կոստանդինուպոլիս՝ ի ձեռն դարբի հի- « պաղոսի, և բողատորական սեղանոյն կի- « նասի, ի ձեռն ստեփանոսի քսանուայի և « քերթողի՝ աշակնաթի տէրն Մովսէսի Սի- « նուց Եպ. Սիւնեցի զնոստ ընդարկեալ « կողք, և փոխեցէք զրոստ յիշատակի ի « յոյս փրկութեան աշխատողոցն և յիշողոյց « սա փա. որոսմ փառք յարիտ. ամեն:

*

Ինչպէս կ'երևի սոյն Յիշատակարանէն՝ Դր. Նիւսացիի թարգմանութիւնը իբրև թէ տեղի ունեցած է Հայոց ՄԻԱ կամ Քրիստոսի (221 + 551 =) 772 թուին. բայց Չամչեան սխալ կը համարի զայն՝, ըսելով թէ՝ Յիշատակարանին մէջ նշառակուած թուականները և անձերը իրարու չեն յարմարիր, և ասով կը հետեցնէ թէ այդ թուականը պէտք է ըլլայ 716, որ Հայոց ՄԻԱ թուին կը համապատասխանէ:

Ինձ կը թուի թէ Չամչեան շատ իրաւացի է այս սրբագրութեան մէջ, մանաւ-

1. « ՁԱՄԻՆԱՆ ՊԱՏԻՔ. ՀԱՅՈՅ » Հասոր Բ. էջ 555.

ւանդ երբ կը տեսնենք թէ (Որբելեան՝ Սիւ-
նեաց Պատմիչ Հեղինակը՝ Ստեփանոս Սիւ-
նեցիի եղբրական մահը կը յիշատակէ՝¹
« ի բռնակոտորեան Հայոց 184, ի Հրոսից
15 և ի յայիսի 21 », որ ըսել է՝ Քրիս-
տոսի (184 + 551 =) 735 թուականին,
Ըստ այսմ յայտնի է՝ ըլլայ, որ 735ին
մեծնող մը՝ 772ին բան թարգմանած չի
կրնար ըլլալ:

*

Վերորդեալ Յիշատակարանով կը փա-
կոսի Նիւսացիի առաջին երկը, յետոյ կը
սկսի անոր երկրորդ գործը, որուն առաջին
էջին մէջտեղը կը կարգանք.

« Գրիգորի եպիսկոպոսի՝ եղբար Բաբ-
« սդի՝ տեսութիւն ի մարդոյն կազմութիւն՝
« զբախս, յորում է իմն մասնաւորական և
« յաղագս աշխարհիս քննախաւտութիւն, և
« զեղեցիկ իմն և պայծառատեսութիւն ».

Հինգ տող վերտառութիւնը, որուն վրան
նկարուած է ծաղկաւէտ խորան մը, և
ասոր վերեւն ալ թագաւորի մը և թագու-
հւոյ մը թագազարդ գլուխները դէմ առ դէմ:
Չետագրին այս մասը կ'աւարտի 621
էջին վրայ, ուր արձանագրուած է ընդո-
րինակութեան Յիշատակարանը, որուն
կարեւոր մասերը կ'արտագրեն:

« Փաթ Հատն անկզնականի, և յա-
« րկխում որդոյն միածնի, և կեանք և
« կեղեցիկութիւն հոգոյն ճշմարտի, ետակի և
« եզակի, անխառնելի և անշփոթ միա-
« բնան՝ այժմ և միշտ և յախտման յա-
« ճիտեմից. որ այժմեաւ արար զիս ան-
« պիտանութիւն, և զարացոյց զիմ տկա-
« րութիւն շինել զբառ և ստացաւ՝ այսմ
« աստուածային իմաստաբան Խաչատու-
« րիս երկոց տապիս Ստեփանն՝ որ է բը-
« նութեան մարդոյն, և երկրորդն՝ կազմա-

« բնան, ի վարժումն իմաստութեան ման-
« կանց Սիւնի:

« Այդ եւ անտրման և մեղսամակար
« ոգիս սոսկ անուամբ սպասաւոր բանի
« Յակոբ քաղորդիս, փափագաւոր եղի աւ-
« տուածային գաւառացի առ ի վարժումն ան-
« ձին իմոյ՝ և յիտ աստուծոյ յիշատակ
« հոգոյ՝ իմոյ և ծնաւորացւ... ասպառ-
« նեցոյ ի հոգին սուրբ և յաղորտ սրբոցն,
« և զտի տաղանկանութիւն իմ տկարաւ-
« բնան, ի ձեռն ամի ծրել և հասի յատարտ-
« Եւ եղի. կատարումն այսմ տառիցս՝ ի
« քվէ. արեւմտեան Հայոց ԶԿԻ: Բաշխարհն
« արեւելից, ի զատարիս Սիւնեաց՝ ի հրեշ-
« տակարեակ մեծաստեփան որ կոչի Գրիգոր,
« զոր համարձակիմն զուս կոչել երկրորդ
« արեւն, և մայրաքաղաք Ա իմաստից,
« ընդ հովանեան սուրբ Ստեփանոսի, և
« կենսակիր աստուածաբարձ սուրբ Անանիս
« որ է ճշմարիտ ի կենաց փայտեմ, և
« դամբարանի սուրբ Վրդի. Ներսէսի: Ի
« վարժարանութեան քաջ հոգեւորի և ամեն-
« իմաստ փիլիսոփայի ետամեծիկ Եսայեայ
« ճշմարիտ պատկերի աստուծոյ և հոգոյն
« երկրեղոյնողի, խոհեմ, հեղ և արի հոգոյն
« յորում կամք զեզերեալ ի դրոմն իմաս-
« տից սուրա քաղունք՝ աշակերտեալ բանին
« ճշմարտութեան, զոր յուսաւորեալ քացաւ-
« յայտեմ զբազում խորին և դժուարաւո-
« ծանելի և անշայտ իմաստու ծածկեալ՝ զոր
« ի գիրս հին և նոր կտակարանաց, և
« վրդպեալեան տաղից՝ որ ի քաղում ժամա-
« նակաց իցեալ ի հարսեցն նախնականաց:
« Այդ աղաչեմ զամենեւեմն որք հանդիպիք
« այսմ տապի յիշել յողորմութիւն քրիստոսի
« զվերորդիչեալ սուրբ Վարդան՝ որ զամե-
« նեւեան սիրով ժողովի և ծնողաբար իւր-
« նամէ՝ մանտաւոր զիմ անարժեանութիւն
« յայսմ աստար և եղեմ վաշիտ, և զմար-
« մեղ ծնողացն գգուր և զխնեմ յաշեմ
« յիս ցոցանէ՝ ոչ միայն բանիս սիրովեմ,
« այլ և գործով կատարեմ որ ի վերայ ա-
« մենայնի և զենթակաւ շնորհեաց՝ հանդերձ
« ծնողք իւրով ի մեղաց քողորմութիւն Եւս
« և զհոգեւոր երկամբ մեծալ որդեակն իւր
« զսիրապուն զբազմերեսիս իւր եղբար իմ

1. « ՈՐԲԵԼԵԱՆ ՊԱՏՄ. ՍԻՒՆԵԱՑ » Տեղ. Բարեգու-
Հատար Ա. էջ 178, և Տեղ. Մոզուսի, էջ 104:

« քստ հոգոյ հսանդերձ ծնողօր յիշ. ի տէր :
 « Նա և զհախաւսացիս ծրառդ և ստուցօրս
 « զյակոբ, հսանդերձ ծնողօրն իմ և Ա. զար-
 « միչք աղալեմ յիշել ի մեղաց բողոքիսն.
 « և աստուած յիշողացդ և յիշողոսսսսսսսսսսս
 « մեղքի և եմա փառք յաւիտ. ամեն : Արդ
 « գրեցաւ ի հայրապետարեան տեսան Կոս-
 « րեան Կիսարացոյ՝ և ի քաջ.որ.քեան
 « Հայոց Աշկի, և Նորքեմա քաղ.ի հայրա-
 « զատ որդոյ իւրոյ Լեօնի » :

*

Այս Յիշատակարանը, զոր Հ. Ալիշան
 մասամբ արտատպած է իւր « ՍԻՍԱԿԱՆ »-ին
 մէջ (134-135), շատ կարեւոր է, նախ այն
 տեսակէտով՝ որ ժ.Բ. Գարու սկիզբը Սիւ-
 նեաց աշխարհի Գլաձոր վանքը եղած է՝
 ուսման և գիտութեան լաւ մենաստան մը,
 որ ունէր բաւական ուսումնաստեան և ու-
 սումնական անձեր, որոնցմէ մին ՅԱԿՈԲ
 ԹԱԳՈՐԾԻ կը նուիրուի գրել ու արտագրել
 Ստեփաննոս Սիւնեցիի թարգմանութիւնը
 1318 թուին : Այս կարեւոր է Հայ բժշ-
 կական պատմութեան համար, որովհետեւ՝
 ցոյց կու տայ մեզ վարդ Մարտիկի ընդ-
 րինակած բժշկարանին թուականին (1294)
 շատ մօտիկ թուական մը (1318), որ ա-
 տեն՝ կ'երևի թէ Սիւնեցիի թարգմանու-
 թիւնը մեծ յարգ ու պատիւ կը վայելէր
 արդէն Հայ բժշկութեան քով, և թերեւ
 այդ թուականին էր՝ որ սկսու ալ առաւ-
 կայ ըլլալ պաշտօնի, երեւալու համար
 շարունակ հետազայ դարերու բազմաթիւ
 Հայ բժշկարաններուն մէջ :

Հայաբնիկիւհան կանգուն էր դեռ, թա-
 գաւորն էր՝ ՕՇԻՆ՝ Հիթումի որդին (|
 1320), հայրը Լեոն Դ.ին :

(Շարունակելի)

ՏՕԹԹ. ՎԱՂԱՄ Զ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Վիեննայի — Ս. Գազար

13 Գիտեմբերի 1922

ՀՆԱԽՈՍՍԻՄԱՆ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՅ

ԵՐ. ՏԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍԱՅ ՎԿԱՅԻՆ

~~~~~

Ա.

Ժ.Է. դարու սկիզբը նսեմ շրջան մ'է՝  
 — և ոչ միայն անշուշտ մեր պատմու-  
 թեան մէջ՝ — կրօնական անհերոգ պայ-  
 քարներու և եղբայրադաւ կրքերու, որոց  
 զոհներն մին եղաւ և տէր Կոմիտաս քհն. Գե-  
 փեմիւրեանց, որ 1707 թուին նահատա-  
 կուեցաւ Կոստանդնուպոլսոյ մէջ, իւր հա-  
 մազգեաց պահանջմամբ՝ իրրեւ կաթողի-  
 կեայ, և մահմետական սրով՝ իրր վկայ  
 քրիստոնէութեան :

Մարտիրոսի շքեղ թաղում մը կատա-  
 րուեցաւ իրեն Պալլադիայի ազգային գերեզ-  
 մանատան մէջ. և իւր հանգստարանն  
 ուխտատեղի էր երկու հարիւր տասնու-  
 հինգ տարիէ ի վեր, և մեծարուած տա-  
 րեւորական յիշատակաւ Պոլսոյ քարեպաշտ  
 հայութեան և ուրիշ քրիստոնեաներէ,  
 որոնք շատ շնորհներ ալ կ'ընդունէին  
 իրանելոյն միջնորդութեամբ :

Աւանդութիւն մը, որ կը մօտենայ իւր  
 նահատակութեան օրերուն, կ'ըսէր ցարդ՝  
 թէ իւր մարմինն յետոյ հանուեր է գե-  
 րեզմանէն ու փոխադրուեր ի Գաղիա. և  
 ըստ լրացուցիչ աւանդութեան մը՝ թա-  
 զուեր ի Լիոն իսկ, Յիսուսեանց Նորըն-  
 ծայարանի եկեղեցւոյն մէջ, ուր և անհե-  
 տացեր է : Տիրող ընդհանուր համոզումն էր  
 այս, զոր սակայն ոչ մի դրական ապացոյց  
 կը հաստատէր :

Եւ մտքերը վարկածէ վարկած կ'անց-  
 նէին : Գաղիոյ յեղափոխութեան ժամանակ  
 հանուած կամ կորսուած լինելու են նըշ-  
 իարները, և այլն : Հնացած ու տարացած  
 նախապաշարունակ խորհել չէր տար, թէ